



**ԺՄՏԱՄԱՆ ՀԱՐԱԳՅՈՒՄԱԿԱՆ ԱՐՏԱԴԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ա. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ժխտումը իմացական-հասկացական կարգ է¹, ուստի այն կարող է արտահայտվել լեզվական տարբեր մակարդակներում գոյություն ունեցող միջոցներով: Ժամանակակից հայերենում ժխտումն արտահայտվում է բառական, ձևաբանական և շարահյուսական միջոցներով: Թերևս ժխտման ամենից ավելի բազմազան ու բազմաբնույթ արտահայտությունը շարահյուսականն է: Դրա պատճառն այն է, որ հենց շարահյուսությունն է ուսումնասիրում արդեն ամբողջական, կապակցված խոսքը, և բառական ու ձևաբանական իրողություններն էլ, ի վերջո, շարահյուսական համակարգում են կենդանություն ստանում: Սա որոշ չափով դժվարացնում է զուտ շարահյուսական ժխտման միջոցների հստակ առանձնացումը:

Դարցին լայն առումով մոտենալիս յուրաքանչյուր հաստատում, միարժեք միտք կարելի է համարել մյուսների ժխտումը: Օրինակ՝ «Գիրքը դրված է սեղանին» նախադասությունն իր արտահայտած իմաստով ժխտում է տվյալ իրադրության մեջ գրքի՝ այլ վայրում գտնվելու մասին հաղորդող ամեն մի նախադասություն և հակադրվում է «Գիրքը դրված է պահարանում» և նման կարգի նախադասություններին: Սակայն այս մոտեցումը տրամաբանական-փիլիսոփայական և լեզվական տեսանկյունից ժխտման տարբերակումը դարձնում է զրեթե անհնար: Լեզվաբանական գրականության մեջ ժխտական նախադասությունների մասին խոսելիս բերվում են այն նախադասությունները, որոնց ստորոգյալն արտահայտված է ժխտական խոնարհում ունեցող բայով: Այսինքն, այդ նախադասություններում ժխտումն արտահայտված է լինում ձևաբանական միջոցով: Մենք շարահյուսական ժխտում ունեցող նախադասություններ ենք համարում միայն նրանք, որոնք ունեն ժխտական բայով արտահայտված ստորոգյալներով համանիշ նախադասություններ: Օրինակ՝ «Ո՞վ կհամարձակվեր արգելել նրան» նախադասությունն ունի «Ոչ ոք չէր համարձակվի արգելել նրան» շարահյուսական համանիշը: Այսպիսով, կիսոսենք այն նախադասությունների մասին, որոնց կազմում առկա չէ ժխտական խոնարհումով բայ, և ժխտումն արտահայտված է շարահյուսական որևէ միջոցով, բայց այդ նախադասությունն ունի ժխտական խոնարհումով բայով կամ ժխտական օժանդակ բայ-հանգույցով արտահայտված համանիշ նախադասություն:

Այժմ քննենք, թե շարահյուսական ինչ միջոցներով է արտահայտվում ժխտումը ժամանակակից հայերենում: Որոշ աշխատություններում իրար համանիշ են համարվում դրական և ժխտական իմաստներ ունեցող այս կարգի նախադասությունները. «Սենյակը մեծ է» - «Սենյակը փոքր չէ»²: Սակայն, ինչպես հենց առաջին հայացքից երևում է, այս նախադասությունների իմաստային հակադրական կապն առաջ է գալիս նրանցում առկա հակամիշ բառերից, ուստի գործ ունենք բառական մակարդակի միջոցով արտահայտվող ժխտման հետ: Մտավորապես այս կարգի հարաբերություն է դրսևորվում անդեն նախադասությունների միջև. օրինակ՝ «Պահպանել մաքրություն» - «Չկեղտոտել»:

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974, էջ 350:

² Տե՛ս Ն. Պառնասյան, *Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում*, Երևան, 1970, էջ 10:

Ժամանակակից հայերենում, որպես ժխտման շարահյուսական արտահայտության ամենակազմով միջոց, հանդես է գալիս հնչերանգը: Հնչերանգի միջոցով ձևավորվող ժխտումն առաջին հերթին դրսևորվում է հարցական դերանուններ ունեցող նախադասություններում. օրինակ՝ «Ինչո՞ւ եկա» նշ. «Չպետք է գալի», «Ի՞նչը կկատեցնի հեղեղի ուժը» նշ. «Ոչինչ չի կատեցնի հեղեղի ուժը»: Այս կարգի նախադասությունները փաստորեն ճարտասանական հարցի մի տեսակն են և միայն ձևակառույց են հարցում արտահայտում³: Խոսողն այդ դեպքում իր հարցին պատասխան չի ակնկալում: Այդպիսի նախադասությունների ամենատեսական յուրահատկությունն այն է, որ նրանցում իմաստային և ձևաբանական ժխտումները գտնվում են հակադարձ կապի մեջ: Եթե նախադասության կազմում կա ժխտական խոնարհումով բայ, ապա նախադասությունն արտահայտում է դրական իմաստ, և հակառակը: Օրինակ՝ «Ինչպե՞ս չգնամ» նախադասությունն արտահայտում է «Պետք է գնամ», իմաստը, մինչդեռ «Ինչպե՞ս գնամ» նախադասությունը՝ «Չպետք է գնամ» իմաստը:

Պետք է հաշվի առնել, որ հարցման միջոցով ժխտում արտահայտելու գործընթացի համար չափազանց կարևոր են հնչերանգը և խոսքաշարային միջավայրը, քանի որ դրանց փոփոխության դեպքում ժխտում կարող է չարտահայտվել: Օրինակ՝ «Նա ի՞նչ է տեսել» նախադասությունը տարբեր հնչերանգներով և տարբեր խոսքային միջավայրերում գործածվելիս կարող է արտահայտել ինչպես հարցում՝ նրա տեսածի վերաբերյալ, այնպես էլ «Նա ոչինչ չի տեսել» միտքը:

Խոսքային միջավայրի և հնչերանգի միջոցով ձևավորվող ժխտումը կարող է դրսևորվել նաև այն նախադասություններում, որոնց կազմում չկա հարցական դերանուն: Այդ դեպքում հարցումն ընկնում է որևէ բառի վրա, որն էլ հենց ժխտվում է: Օրինակ՝ «Շա՞տ է հասկանում» նշ. «Ոչինչ չի հասկանում», «Նա անխե՞ղք է» նշ. «Նա անխեղք չէ»:

Ժխտում կարող է արտահայտվել նաև բացականչական հնչերանգի միջոցով: Այդ կարգի նախադասություններն իրենց կառուցվածքային հատկանիշներով հիմնականում նման են հարցական հնչերանգով ժխտում արտահայտող նախադասություններին: Դրանցում էլ հանդես են գալիս հարցահարաբերական դերանուններ կամ այլ բառեր, որոնք, կրելով բացականչական հնչերանգ, կարող են ժխտում արտահայտել: Օրինակ՝ «Ի՞նչ դժվար էր նրան այցելելը» նախադասությունը կարող է արտահայտել «Նրան այցելելը դժվար չէր» իմաստը: Այս դեպքում ևս կարևոր են հնչերանգը և խոսքային միջավայրը, քանի որ դրանցով պայմանավորված՝ նախադասությունը կարող է ընկալվել նաև ուղղակի իմաստով:

Շարահյուսական մակարդակում ժխտում արտահայտելու համար կարևոր դեր են խաղում նաև եղանակավորող բառերը, որոնց միջոցով արտահայտվող վերաբերմունքը կարող է ազդեցություն ունենալ նախադասության իմաստի վրա՝ այն դարձնելով ժխտական: Մի կողմ թողնելով ժխտական եղանակավորող բառերը, որոնք ուղղակիորեն ժխտական իմաստ ունեն և նմանվում են Չ մասնիկին («Ոչ եկել է, ոչ տեսել» նշ. «Չի եկել և չի տեսել»), անդրադառնանք մյուս եղանակավորող բառերին: Առաջին հերթին ժխտական իմաստ ունեցող նախադասություններ են ձևավորում ափսոսանք, զղջում արտահայտող զգացական եղանակավորող բառերը. օրինակ՝ «Ափսոս գնաց» նշ. «Չպետք է գնար», «Իզուր եկա» նշ «Չպետք է գալի»: Ժխտական իմաստով նախադասություններ կարող են ձևավորել նաև սահմանափակման, սաստկական և երկբայական եղանակավորող բառերը: Այդ նախադասություններն արտաբերվում են տարբեր հնչերանգներով, որոնք էական նշանակություն ունեն. օրինակ՝ «Միայն դու կգնաս» նշ. «Մյուսները թող չգնան», «Հենց նա՞ պետք է գնար» նշ. «Ուրիշը չէ՞ր կարող գնալ», «Իբրև թե եկավ, բերեց» նշ. «Չի գա և չի բերի», «Մի՞թե կարելի է» նշ. «Չի կարելի», «Ես անպայման պետք է գնամ» նշ. «Չեմ կարող չգնալ»:

³ Տես Պ. Պողոսյան, *խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, հ. 2, Երևան, 1991, էջ 178-180:

ժխտման յուրօրինակ ձևավորում է կատարվում նաև տրամաբանական շեշտի միջոցով: Քանի որ տրամաբանական շեշտը հատուկ ընդգծում է նախադասության կազմի մեջ մտնող որևէ բառ կամ բառախումբ, ապա այդ բառը (բառախումբը), իր շեշտվածությամբ արտահայտվող իմաստով հակադրվում է տվյալ իրադրության մեջ ենթադրվող մյուս հասկացություններին: Օրինակ՝ «Դու՝ կարող ես կատարել այդ աշխատանքը» նախադասության մեջ դու դերանվան շեշտվածությունն առաջ է բերում «Ուրիշները չեն կարող կատարել այդ աշխատանքը» իմաստը:

Պարզ նախադասության միջոցով ժխտում արտահայտելու համար կարևոր դեր են խաղում նաև կապերը, քանի որ դրանք իրենց իմաստային տարբեր նրբերանգներով մեծ ազդեցություն ունեն նախադասության իմաստի ձևավորման վրա: Առաջին հերթին ժխտական իմաստով կառույցներ են ձևավորվում բացառման և փոխարինության իմաստ ունեցող կապերով: Բացառման իմաստ ունեցող կապերի գործածության դեպքում ժխտումը վերաբերում է հենց կապի խնդրին, ինչպես՝ «Բացի նրանից մյուսները թող գան» նշ. «Նա թող չգա, մյուսները թող գան»: Փոխարինության իմաստ արտահայտող կապերով ձևավորված նախադասություններում առկա է հակառակ երևույթը. հաստատվում է կապի խնդիրը, և ժխտվում է նրա փոխարեն կատարված իրողությունը: Օրինակ՝ «Փոխանակ տուն գնալու եկավ այստեղ» նախադասությունն արտահայտում է «Պետք է տուն գնար, չպետք է գար այստեղ» իմաստը: Դրոշ կառույցներում ժխտում կարող է արտահայտվել ձևի, նմանության, չափի և այլ իմաստներ ունեցող կապերով: Նման դեպքերում ժխտումը ձևավորվում է կոնկրետ բառական իմաստների միջոցով: Օրինակ՝ «Հիմարի պես գնաց» նախադասությունն արտահայտում է «Չպետք է գնար» իմաստը:

Սինչև այժմ մենք խոսեցինք պարզ նախադասությամբ ձևավորվող շարահյուսական ժխտման մասին, սակայն ժխտումն արտահայտվում է նաև բարդ նախադասության միջոցով, ընդ որում, այդ դեպքում ավելի բազմազան ձևերով: Բարդ նախադասության կազմում ժխտման ձևավորման գործընթացում էական դեր են խաղում շաղկապները: Ինչպես հայտնի է, շաղկապները միավորվում են իմաստային տարբեր խըմբերի մեջ, և նրանց իմաստները կարևոր նշանակություն ունեն ողջ նախադասության իմաստի արտահայտման հարցում: Ժխտում արտահայտող բարդ նախադասություններն առաջին հերթին կազմավորվում են ներհակակառն շաղկապներով: Քանի որ այդ շաղկապներն իրար են կապում տվյալ դեպքում իրար հակառակ, իրար չհամընկնող փաստեր, ուստի այդ կառույցներում փաստերից մեկը ժխտում է մյուսի հնարավորությունը: Օրինակ՝ «Պետք է գնալի, բայց խանգարեցին» նախադասության մեջ բայց շաղկապն արտահայտում է երկու գործողությունների հակադարձ կապը, ուստի դրանցից առաջինը ժխտվում է: Այդ նախադասությունը համանիշ է «Չգնացի, որովհետև խանգարեցին» նախադասությանը:

Ժխտում կարող են արտահայտել նաև պայմանի, մասամբ նաև պատճառի ու հիմունքի իմաստ ունեցող շաղկապներով ձևավորվող նախադասությունները: Դա կատարվում է այն դեպքում, երբ բարդ նախադասության կազմում միավորվում են այնպիսի փաստեր, որոնցից մեկը կարող է կատարվել մյուսի կատարման դեպքում, սակայն, քանի որ չի կատարվում մեկը, չի կատարվում նաև մյուսը: Օրինակ՝ «Եթե կարդար, կհասկանար» նախադասությունն արտահայտում է «Չի կարդացել, այդ պատճառով էլ չի հասկացել» իմաստը:

Բարդ նախադասության համակարգում յուրօրինակ ժխտում են արտահայտում այն կառույցները, որոնցում առկա են ՈՒ շաղկապով կապակցված ստորոգյալներ: Այդ կարգի նախադասություններում միավորվում են երկու՝ առաջին հայացքից իրար չհակադրվող գործողություններ, որոնք, սակայն, որոշակի խոսքային միջավայրում և որոշակի հնչերանգով արտաբերելիս ժխտում են արտահայտում: Օրինակ՝ «Արի ու հասկացիր», «Գնա ու գտիր» նախադասություններն արտահայտում են «Չնարավոր չէ հասկանալ», «Չնարավոր չէ գտնել» իմաստները: Այսպիսի նախադասություններն ավելի շատ բնորոշ են խոսակցական ոճին: Չնարավոր է, որ երկու ստորոգյալները կա-

պակցվեն առանց շաղկապի: Այդ նախադասությունների համար բացի խոսքային միջավայրից և հնչերանգից կարևոր են նաև բայի քերականական կարգերը: Օրինակ՝ «Գայիր, տեսնեիր», «Եկավ, բերեց» նախադասություններից առաջինում ժխտման արտահայտությունն առաջին հերթին կապվում է բայածևերին, քանի որ դրանք դրված են ըղծական եղանակով, որն արտահայտում է չիրականացած գործողություն: Երկրորդ՝ «Եկավ, բերեց» նախադասության ժխտումը պայմանավորվում է հնչերանգով և խոսքային միջավայրով, քանի որ բայածևերն արտահայտված են քերականորեն ստույգ կատարված, կատարվող կամ կատարելի գործողություն ցույց տվող սահմանական եղանակի բայածևերով:

Ժխտում արտահայտվում է նաև համեմատություն արտահայտող բարդ նախադասությունների միջոցով: Դրանք հիմնականում խոսակցական լեզվին բնորոշ և կայուն կառուցվածք ունեցող նախադասություններ են, որոնք համապատասխան հնչերանգի և խոսքային միջավայրի առկայության դեպքում կարող են ժխտում արտահայտել: Օրինակ՝ «Ինչքան դու ես օգնել, այնքան էլ եմ» նախադասությունը կարող է արտահայտել «Նա բոլորովին չի օգնել» իմաստը, չնայած կարող է հասկացվել նաև ուղղակի իմաստով: Այս նախադասությունները որոշ չափով հիշեցնում են դարձվածային միավորներ, սակայն դրանցից տարբերվում են, քանի որ կայուն են կառուցվածքով, բայց նրանց բառերը կարող են փոխվել: Ի դեպ, ժխտումը կարող է արտահայտվել հենց հաղորդակցական, այսինքն՝ նախադասություն դարձվածքներով, օրինակ՝ «Աստված գիտե» նշ. «Չայտնի չէ»: «Ճրագով են ման գալիս» նշ. «Չկա»:

Ինչպես տեսանք, շարահյուսական մակարդակում ժխտումն արտահայտվում է ամենատարբեր միջոցներով: Այդ գործընթացում դեր են խաղում մի շարք գործոններ, իսկ որոշ դեպքերում միաժամանակ այդ գործոններից մի քանիսը: Առաջին հերթին շարահյուսական մակարդակում ժխտումն արտահայտվում է հնչերանգի միջոցով. մասնավորապես ակտիվություն են ցուցաբերում հարցական և բացականչական հնչերանգները: Դրանից բացի, կարևորություն են ստանում եղանակավորող բառերը, կապերը և շաղկապները: Բարդ նախադասության կազմում ժխտում արտահայտելու համար էական դեր ունի նախադասության կառուցվածքը, ինչպես նաև ստորոգյալի արտահայտությունը: Շարահյուսական ժխտման առանձնահատկությունն այն է, որ այս դեպքում ժխտումը կապվում է ոչ միայն քերականական կարգերի հետ, այլ նաև առնչվում է լեզվամտածողությանն ու ազգային հոգեբանությանը: Այս կարգի ժխտում ունեցող նախադասությունները դժվար են թարգմանվում այլ լեզուներով, որովհետև բառացի թարգմանության դեպքում իմաստը կարող է աղավաղվել: Այդ պատճառով էլ ավելի է կարևորվում շարահյուսական ժխտման ուսումնասիրությունը: Ցավոք, այդ ուղղությամբ մեզանում շատ քիչ քայլեր են արվել, և բազում հարցեր դեռ կարոտ են լուսաբանման:

А. Л. Саргсян-Синтаксическое выражение отрицания в современном армянском.-В статье исследуются синтаксические средства, которыми выражается отрицание. В современном армянском как таковые выступают интонация, модальные слова, союзы, предлоги. Существенную роль играют структурные особенности предложений.